

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԱՐԵՎՈՐ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԽՈՆԱՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ,
ՀԱԿՏԱՊԵՍ ՈՐՊԵՍ ԶՐԱՅԻՆ ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԿԱՎԱՅՐ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻՏԵՔՍՏԸ

Ռամսար, 2.2.1971

ինչպես լրացված է 3.12.1982 թ. արձանագրության մեջ

28.5.1987 թ. ուղղումներով

Պայմանավորվող կողմերը,

Ճանաչելով մարդու և շրջակա միջավայրի փոխադարձ կապը.

Նկատի ունենալով խոնավ տարածքների հիմնական էկոլոգիական գործառնությունը, որպես ջրային ռեժիմը կանոնակարգող և յուրահատուկ ֆլորային և ֆաունային, հատկապես ջրային թռչունին աջակցող միջավայր.

Համոզված լինելով, որ խոնավ տարածքները ունեն տնտեսական, մշակութային, գիտական և ռեկրեացիոն մեծ արժեք, որոնց կորուստը կլինի անուղղելի.

Ցանկանալով դադարեցնել խոնավ տարածքների ներխուժումը և կորուստը ներկայումս և ապագայում.

Հասկանալով, որ ջրային թռչունները սեզոնային չուերի ընթացքում կարող են հատել սահմաններ և պետք է ճանաչվեն միջազգային նշանակության ռեսուրս.

Լինելով վստահ, որ խոնավ տարածքների և դրանց ֆլորայի և ֆաունայի պահպանությունը կերաշխավորվեն ազգային երկարաժամկետ քաղաքականությունների և համաձայնեցված միջազգային գործողությունների համակցման միջոցով.

Համաձայնության եկան հետևյալի շուրջ.

Հոդված 1

1. Սույն Կոնվենցիայի նպատակներին համապատասխան խոնավ տարածքներ են ճանաչվում բնական կամ արհեստական, ժամանակավոր կամ մշտական ճահիճները, խրուտները, տորֆավայրերը կամ ջրատարածքները՝ լճացած կամ հոսացող, քաղցրահամ, աղիավուն կամ աղի, այդ թվում նաև ծովային տարածքները, որոնց խորությունը տեղատվության ժամանակ չի գերազանցում վեց մետրից:

2. Սույն Կոնվենցիայի նպատակներին համապատասխան ջրային թռչուններ են ճանաչվում այն թռչունները, որոնք էկոլոգիապես կապված են խոնավ տարածքների հետ:

Հոդված 2

1. Յուրաքանչյուր պայմանավորվող կողմ պետք է որոշակիացնի իր սահմաններում գտնվող համապատասխան խոնավ տարածքները դրանք Միջազգային կարևորության խոնավ տարածքների ցանկում ընդգրկելու համար, որն հետագայում հիշատակվում է որպես Ցանկ և

պահպանվում է թիվ 8 Հոդվածի համաձայն ստեղծված բյուրոյում: Յուրաքանչյուր խոնավ տարածքի սահմանները պետք է ճշգիտ նկարագրվեն և նշվեն քարտեզի վրա: Դրանք կարող են ընդգրկել խոնավ տարածքներին կից գետամերձ և առափնյա գոտիները, կղզիները, ինչպես նաև վեց մետր խորությունը գերազանցող ծովային տարածքները, որոնք գտնվում են խոնավ տարածքների սահմաններում և հանդիսանում են ջրային թռչունների կարևոր բնակավայր:

2. Խոնավ տարածքները, որոնք ընդգրկվելու են Ցանկում, պետք է ընտրվեն ելնելով դրանց միջազգային կարևորությունից էկոլոգիայի, բուսաբանության, կենդանաբանության, լճաբանության և ջրաբանության տեսանկյունից: Առաջնահերթ Ցանկում ընդգրկվելու են ջրային թռչունի համար տարբեր սեզոններին միջազգային նշանակություն ունեցող խոնավ տարածքները:

3. Խոնավ տարածքների ընդգրկումը Ցանկում չի անրադառնալու Պայմանավորվող կողմի այն բացառիկ իրավունքների վրա, որոնք գործում են տվյալ երկրի տարածքում:

4. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կոնվենցիան ստորգրելու, վավերացնելու կամ միանալու ժամանակ պետք է ներկայացնի առնվազն մեկ խոնավ տարածք՝ Ցանկում ընդգրկվելու համար, ինչը նախատեսվում է թիվ 9 հոդվածով:

5. Ցանկացած Պայմանավորվող կողմ իրավունք ունի Ցանկը համալրել իր տարածքում գտնվող այլ խոնավ տարածքով, ընդլայնել Ցանկում արդեն ընդգրկված խոնավ տարածքի սահմանները, կամ, ելնելով ազգային շահերից, վերացնել կամ կրճատել Ցանկում ընդգրկված խոնավ տարածքի սահմանները՝ հնարավոր կարճ ժամկետում տեղեկացնելով նման փոփոխությունների մասին այն կազմակերպությունը կամ կառավարությունը, որը իրավասու է կատարելու բյուրոյի պարտականությունները, ինչպես նշված է թիվ 8 Հոդվածում:

6. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է ճանաչի իր միջազգային պատասխանատվությունները չվող ջրային թռչունների պաշարների պահպանության, կառավարման և խոհեմ օգտագործման ոլորտներում, ինչպես Ցանկում գրանցումներ կատարելիս, այնպես էլ օգտագործելով իր իրավունքը փոխելու իր տարածքում գտնվող խոնավ տարածքների գրանցումները Ցանկում:

Հոդված 3

1. Պայմանավորվող կողմերը պետք է ձևակերպեն և իրականացնեն իրենց պլանավորման աշխատանքները այնպես, որ խրախուսեն Ցանկում նշված խոնավ տարածքների պահպանությունը և հնարավորին չափով իրենց տարածքում գտնվող խոնավ տարածքների խոհեմ օգտագործումը:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է հնարավոր կարճ ժամկետում տեղեկացնի իր տարածքում գտնվող և Ցանկում նշված խոնավ տարածքի էկոլոգիական բնույթի փոփոխությունների մասին, թե արդյոք այդ փոփոխությունները տեխնոլոգիական զարգացման կամ մարդու միջամտության արդյունք են հանդիսանում: Նման փոփոխությունների մասին տեղեկությունները պետք է անհապաղ փոխանցվեն այն կազմակերպությանը կամ կառավարությանը, որը իրավասու է կատարելու բյուրոյի պարտականությունները, ինչպես նշված է թիվ 8 Հոդվածում:

Հոդված 4

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է աջակցի խոնավ տարածքների և ջրային թոշունների պահպանման գործին, ստեղծելով խոնավ տարածքներում բնական արգելոցներ անկախ նրանից, թե գրանցված են դրանք Ցանկում թե ոչ, և ապահովելով դրանց պատշաճ հսկողությունը:
2. Ելնելով անհետաձգելի ազգային շահերից Պայմանավորվող կողմը Ցանկում նշված խոնավ տարածքը կարող է հանել կամ կրճատել դրա սահմանները: Այդ դեպքում Պայմանավորվող կողմը պարտավորվում է հնարավորին չափով փոխհատուցի խոնավ տարածքի ռեսուրսների ցանկացած կորուստը, մասնավորապես այն պետք է ստեղծի խոնավ տարածքներում փոխարինող բնական արգելոցներ³ ջրային թոշունների պահպանության նպատակով, նույն տարածքում կամ որևիցե այլ տեղամասում սկզբնական բնակավայրի ծավալի համապատասխան չափով:
3. Պայմանավորվող կողմերը պետք է աջակցեն խոնավ տարածքների և դրանց ֆլորային և ֆաունային առնչվող ուսումնասիրությունների, տվյալների և հոդվածների փոխանակմանը:
4. Պայմանավորվող կողմերը կառավարման միջոցով պետք է ջանքեր գործադրեն ավելացնելու ջրային թոշունների պոպուլյացիաները համապատասխան ջրային տարածքներում:
5. Պայմանավորվող կողմերը պետք է խրախուսեն խոնավ տարածքների ուսումնասիրման, կառավարման և պահպանման ոլորտներում իրազեկ անձնակազմի ուսուցմանը:

Հոդված 5

Պայմանավորվող կողմերը պետք է միմյանց հետ խորհրդակցեն Կոնվենցիայից բխող պարտավորությունների շուրջ, հատկապես այն դեպքում, երբ խոնավ տարածքը գտնվում է ավելի քան մեկ Պայմանավորվող կողմի տարածքում, կամ եթե ջրային հատվում են Պայմանավորվող կողմերի սահմաններում: Միաժամանակ, Պայմանավորվող կողմերը պետք է համաձայնեցնեն և աջակցեն խոնավ տարածքների և դրանց ֆլորայի և ֆաունայի պահպանությանն առնչվող ներկա և ապագա քաղաքականությանը և կարգավորմանը:

Հոդված 6

Կոնվենցիայի իրականացման ընթացքը քննարկելու և դրանց աջակցելու նպատակով հրավիրելու է Պայմանավորվող կողմերը համաժողով: Թիվ 1 Հոդվածի 1 կետում նշված բյուրոն կազմակերպելու է Պայմանավորվող կողմերի հերթական համաժողովները⁴ երեք տարի ժամանակահատվածից ոչ ավելի ուշ, եթե համաշոգովը չորոշի այլ կերպ: Արտահերթ համաժողովները հրավիրվում են Պայմանավորվող կողմերի մեկ երրորդի կողմից ներկայացված գրավոր խնդրանքի հիման վրա: Պայմանավորվող կողմերի յուրաքանչյուր հերթական համաժողովի ընթացքում պետք է որոշեն հաջորդ հերթական համաժողովի անցկացման վայրը և ժամկետը:

Պայմանավորվող կողմերի համաժողովը իրավասու է.

ա. քննարկել սույն Կոնվենցիայի կատարումը.

բ. քննարկել Ցանկում կատարվող փոփոխություններն ու լրացումները.

գ. հաշվի առնել Ցանկում գրանցված խոնավ տարածքներում արձանագրված էկոլոգիական բնույթի փոփոխությունները համաձայն թիվ 3 Հոդվածի 2-րդ կետի.

պայմանավորվող կողմերին անել ընհանուր կամ հատուկ առաջարկություններ^ա խոնավ տարածքների և դրանց ֆլորայի և ֆաունայի պահպանության, կառավարման և խոհեմ օգտագործման վերաբերյալ.

ե. խնդրել համապատասխան միջազգային մարմիններին մշակել հաշվետվություններ և վիճակագրական տվյալներ այն հարցերի շուրջ, որոնք էական միջազգային ազդեցություն ունեն խոնավ տարածքների վրա.

զ. սույն Կոնվենցիայի ֆունկցիաները խրախուսելու նպատակով ընդունել այլ առաջարկություններ կամ ամփոփագրեր:

Պայմանավորվող կողմերը վստահեցնում են, որ խոնավ տարածքների բոլոր մակարդակներում կառավարման պատասխանատու մարմինները տեղեկացնում են, հաշվի են առնում և ընդունում են համաժողովի կողմից արված առաջարկությունները^ա խոնավ տարածքների և դրանց ֆլորայի և ֆաունայի պահպանության, կառավարման և խոհեմ օգտագործման վերաբերյալ:

Պայմանավորվող կողմերի համաժողովը պետք է ընդունի յուրաքանչյուր նման համաժողովի ընթացակարգի կանոնները:

Պայմանավորվող կողմերի համաժողովը պետք է մշակի և գննման տակ պահի Կոնվենցիայի ֆինանսական կանոնադրությունները: Յուրաքանչյուր հերթական համաժողովի ընթացքում այն պետք է ընդունի հետագա ժամանակահատվածի բյուջեն ներկա և քվեարկող Պայմանավորվող կողմերի ձայների երկու երրորդով:

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է իր ներդրումը կատարի բյուջեյում^ա հերթական հանդիպմանը ներկա և քվեարկող Պայմանավորվող կողմերի կողմից ընդունված վճարումների սանդղյակի համաձայն:

Հոդված 7

1. Պայմանավորվող կողմերի ներկայացուցիչները նման համաժողովներում պետք է լինեն խոնավ տարածքների կամ ջրային թռչունների փորձագետներ^ա ելնելով իրենց գիտելիքներից և փորձից, որն ձեռք է բերվել գիտական, վարչական կամ այլ համապատասխան ոլորտներում:

2. Պայմանավորվող կողմերի համաժողովներում ներկայացուցիչները ձայների պարզ մեծամասությամբ ընդունվող առաջարկությունների, ամփոփագրերի և որոշումների քննարկմանը ունենալու են մեկ ձայն, եթե Կոնվենցիայի կողմից չընդունվի այլ կարգ:

Հոդված 8

1. Բնության և բնական ռեսուրսների պահպանության միջազգային միությունը կատարելու է սույն Կոնվենցիայի շրջանակներում մշտական բյուրոյի պարտականությունները այնքան ժամանակ, մինչև որ Պայմանավորվող կողմերի երկու երրորդի ձայների մեծամասությամբ չորոշվի դրանք հանձնարարել մի այլ կազմակերպությանը կամ կառավարությանը:

2. Բյուրոյի մշտական պարտականությունները, այլոց շարքում, լինելու են հետևյալը.

ա. օժանդակել համաժողովի հրավիրման և կազմակերպման աշխատանքներին, ինչպես նշված է թիվ 6 Հոդվածում.

բ. պահպանել Միջազգային կարևորության խոնավ տարածքների ցանկը և տեղեկություններ ստանալ Պայմանավորվող կողմերից Ցանկում գրանցված խոնավ տարածքների վերաբերյալ ցանկացած լրացումների, ընդլայնումների, դուրս բերումների կամ կրճատումների մասին, ինչպես ներկայացված է Հոդված 2-ի թիվ 5 կետում.

գ. տեղեկություններ ստանալ Պայմանավորվող կողմերից Ցանկում գրանցված խոնավ տարածքների էկոլոգիական բնույթի ցանկացած փոփոխությունների մասին, ինչպես ներկայացված է Հոդված 3-ի թիվ 2 կետում.

դ. բոլոր Պայմանավորվող կողմերին հղել տեղեկագիր^a ցանկում կամ խոնավ տարածքներում կատարվող փոփոխությունների մասին և համապատասխան քայլեր ձեռնարկել այդ հարցերը զալիք համաժողովին քննարկելու համար.

ե. շահագրգիռ Պայմանավորվող կողմերին տեղեկացնել համաժողովի այն առաջարկությունների մասին, որոնք վերաբերվում են Ցանկում, կամ խոնավ տարածքներում կատարված փոփոխություններին:

Հոդված 9

1. Սույն Կոնվենցիան անժամկետ բաց է ստորագրելու համար:

2. Սույն Կոնվենցիային Կողմ կարող է դառնալ Միացյալ ազգերի կամ որևէ Մասնագիտացված գործակալությունների կամ Ատոմային Էներգիայի միջազգային գործակալության ցանկացած անդամ, կամ Միջազգային դատարանի կանոնադրությանը Կողմ երկիր.

ա. ստորագրելով այն առանց վավերացման վերապահման.

բ. ստորագրելով այն հետագա վավերացումով.

գ. ընդունելով այն:

3. Վավերացումը կամ ընդունումը պետք է ապահովվի վավերացման կամ ընդունման դեպոզիտով Միացյալ ազգերի կրթական, գիտական և մշակութային կազմակերպության գլխավոր տնօրենի հետ (հետագայում “Դեպոզիտոր”):

Հոդված 10

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում չորս ամիս անց այն պահից, երբ յոթ պետություններ կդառնան Կոնվենցիայի անդամ, ինչպես նշված է Հոդված 9-ի թիվ 2 կետում:

2. Հետագայում սույն Կոնվենցիան յուրաքանչյուր Պայմանավորվող կողմերի համար կմտնի ուժի մեջ չորս ամիս անց այն ստորագրելու առանց վավերացման վերապահման կամ ստորագրելու հետագա վավերացումով կամ ընդունելու դեպոզիտը կատարելուց հետո:

Հոդված 10բիս

1. Սույն Կոնվենցիան կարող է փոփոխվի այդ նպատակով հրավիրված Պայմանավորվող կողմերի համաժողովին:

2. Ուղղումների առաջարկություններ կարող է կատարել ցանկացած Պայմանավորվող կողմ:

3. Առաջարկվող ուղղումների տեքստը և դրա պատճառները պետք է ներկայացվեն սույն Կոնվենցիայի շրջանակներում բյուրոյի մշտական պարտականությունները կատարող կազմակերպությանը կամ կառավարությանը (հետագայում “Բյուրո”) և Բյուրոյի կողմից այն պետք է հղվի բոլոր Պայմանավորվող կողմերին: Տեքստի վերաբերյալ ցանկացած մեկնաբանությունները Պայմանավորվող կողմերը պետք է հղեն Բյուրոյին երեք ամսվա մեջ Բյուրոյից ստանալուց հետո: Մինչև նշված ժամկետի վերջին օրը ստացած բոլոր մեկնաբանությունները Բյուրոն անմիջապես պետք է հղի Պայմանավորվող կողմերին:

4. Թիվ 3 կետում հիշատակվող ուղղումները քննարկելու նպատակով Պայմանավորվող կողմերի հանդիպումը կհրավիրվի Բյուրոյի կողմից՝ Պայմանավորվող կողմերի մեկ երրորդի կողմից ներկայացված գրավոր խնդրանքի հիման վրա: Բյուրոն պետք է քննարկի Պայմանավորվող կողմերի հետ հանդիպման ժամկետը և վայրը:

5. Ուղղումները կընդունվեն ներկա և քվեարկող Պայմանավորվող կողմերի ձայների երկու երրորդի մեծամասությամբ:

6. Ընդունված ուղղումները Պայմանավորվող կողմերի համար մտնում են ուժի մեջ սկսած Պայմանավորվող կողմերի երկու երրորդի ընդունման դեպոզիտները ներկայացնելու պահից չորրորդ ամսվա առաջին օրվանից: Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի համար, որի ընդունման դեպոզիտը ներկայացվում է Պայմանավորվող կողմերի երկու երրորդի ընդունման

դեպոզիտները ներկայացնելուց հետո, ուղղունները ուժի մեջ են մտնում ընդունման դեպոզիտը ներկայացնելուց չորս ամիս անց առաջին օրը:

Հոդված 11

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է անսահման ժամկետով:
2. Ցանկացած Պայմանավորվող կողմ կարող է չեղյալ համարել սույն Կոնվենցիան ներկայացնելով գրավոր տեղեկագիր, այս Կողմի համար Կոնվենցիան ուժի մեջ մտնելու պահից հինգ տարի անց: Կոնվենցիայի չեղյալ համարելը ուժի մեջ է մտնում Դեպոզիտորի կողմից գրավոր տեղեկագիրը ստանալուց չորս ամիս անց:

Հոդված 12

1. Դեպոզիտորը որքան հնարավոր է շուտ պետք է տեղեկացնի բոլոր այն պետություններին, որոնք ստորագրել կամ միացել են սույն Կոնվենցիային հետևյալի մասին.

- ա. Կոնվենցիային միանալու.
- բ. վավերացման դեպոզիտը ներկայացնելու.
- գ. ընդունելու դեպոզիտը ներկայացնելու.
- դ. Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու ժամկետի.
- ե. Կոնվենցիայի չեղյալ համարելու:

2. Սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուն պես, Դեպոզիտորը պետք է այն գրանցի Միացյալ Ազգերի Քարտուղարությունում համաձայն Կանոնադրության թիվ 102 Հոդվածի:

ԻՆՉԻ ՄԱՍԻՆ ՎԿԱՅԱԿՈՉԵԼՈՎ, ներքոստորագրյալներս, լինելով լիովին լիազորված, ստորագրեցինք սույն Կոնվենցիան:

ԿԱՏԱՐՎԱԾ Է Ռամսարում, 1971 թվականի փետրվարի 2-րդ օրը, մեկական սկզբնագրով Անգլերեն, Ֆրանսերեն, Ռուսերեն և Գերմաներեն լեզուներով, տեքստերի հավասարազորությունը ներկայացվելու է Դեպոզիտորին, որը կուղարկի դրա ճշգրիտ պատճենը բոլոր Պայմանավորվող կողմերին: